ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն տեղի համար ուր այս լրագրի մուտքն արգիլուած չէ, ամբողջ 20րդ շրջանի (1904 օգոստ.—1905 յունիս) բաժնորդագինն է 20 Ֆր. կանխիկ կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամէն մէկ ամսականը 2 Ֆր. հաշուելով և 1905 յունիս ամսէն անդին չանց ելու պայմանով։

Նամակ և ծրարպէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France).

Ի ՏԱՐԻ

ԹԻՒ 24

1905 ՅՈՒՆՈՒԱՐ 11 Դ.

(Հ. Տ. Դեկտեմբեր 29)

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Ամբողջ գրութիւնը, եթէ յարկ համարի, համառօտելով և կամ ամբողջ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Մանուկ-ամեներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Մանուկման 1 միջակ էջը 1 սանդիմ արժէ։ 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction : Rue Beaumont, 9.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային ադետներ. — Վեհ. կաթողիկոսն եւ եկեղեցական կալուածներու խնդիրը. — Հայեր ի Թիւրքիա. — Արժ. Տ. Բօյան Մանկակուճի Ա. Քահանայի տեղեկագիրը Պուկարիայի Հայերի պետքերին վրայ. — Նամակ խմբագրութեան (Բարիզէն). — Թուրիզի Հայուհեաց Բարեգործական Միացեալ ընկերութիւնը. — Ֆօլէրան վանքի մէջ. — Թիւրքիահն լուրեր. — Ռուսիա. — Գեղապետ Խասքեր. — Ռուսեւճաբոճական պատերազմը. — Արտասահմանի լուրեր. — Տանն ցուցմներ։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԻՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ, "ԱՐՄԷՆԻԱ,,Ի Ի ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

(1904 ՕԳՈՍՏՈՍ — 1905 ՅՈՒՆԻՍ)

20րդ շրջանի բաժնորդագրութիւնը կը սկսի 1904 օգոստոսէն և կը տեւէ մինչեւ 1905 յունիսի վերջը։ Ամբողջ 20րդ շրջանի բաժնորդագինն է 20 ֆրանգ կանխիկ վճարելի։ կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի՛ ամսի համար որ ուզուի, ամսական 2 ֆրանգ հաշուելով։

Անանք որ Արմենիահ Օժանդակ կը գրուին մեր հրատարակած Օժանդակութեան կանոնագրի համեմատ կատարելով իրենց պարտականութիւն, իրաւունք կունենան, իրենց ստացած 1 օրինակ Արմենիահէն զատ — որի համար ամբողջ բաժնորդագին 20 ֆր. պէտք է վճարեն —, քանի՛ անձի համար որ ուզեն, Արմենիա բերել տալու իրենց ստացած լրագրի ծրարին մէջ դրելով և կէս բաժնորդագնով, այսինքն՝ ամբողջ շրջանին համար 10 ֆր.ով և կամ ամսական 1 ֆր.ով։ Ցանկացողին կը ղրկենք «Արմենիահ Օժանդակութեան» համար մեր հրատարակած կանոնագիրը։

Բաժնորդագիրներուն կանխիկ վճարումը մեծ դիւրութիւններ կընծայէ թերթի կանոնաւոր ընթացքին և յայտնի է որ Եւրոպահ և Ամերիկահ մէջ ամէն ազգեր սովորութիւն ունին իրենց ստացած լրագրի բաժնորդագինը կանխիկ ղրկելու. անոր համար իրենց լրագիրները ալ կրնան կանոնաւոր ընթացք մ՚ունենալ։

ԱԶԳԱՑԻՆ ԱՂԷՏՆԵՐ

Ազգերի կեանքին մէջ սովորական լինելու չափ գրեթէ անխուսափելի և անհրաժեշտ եղած են պարբերական ապտներ. հետեւանք՝ առհասարակ ժամանակի ընթացքին մէջ կամաց կամաց խտացած թերութիւնների, նախապաշարումներու, այլեւս անժամանակ դարձած օրէնք ու սովորութիւնների, ղեկավարող ոյժերի անհատեսութեան են. են.։ Մի՛լատներ ձեւափոխութիւններին պէս (métamorphisme), ատոնք էլ թէեւ վերին ձեւ փոփոխ սակայն կարեւոր ու կենսական փոխանցումների հանգոյցներ են։

Փորձութիւնների այդ բովը և այդ ծովը, ուր մկրտուելով պիտի անցնին ամէնք, կրնայ լինել մահացու կամ վերակենդանացնող, նայելով թէ այդ ազգութիւնների ներքին կազմութիւն, էական ոյժ, հոգեկան տրամադրութիւն աւելի կամ նուազ առողջ թէ հիւանդ կաց ութեան մը մէջ կը գըտնուին։

Այսպէս, թողած պատմութեան անթիւ օրինակները որոնք անտուտ վկայներ են հեռաւոր ու մօտաւոր անցեալի մէջ բազմաթիւ ժողովուրդներու գոյութեան – մահերի և ծնունդներիմեր օրերն էլ կը տեսնենք թէ ի՛նչպէս ազգեր ու պետութիւններ կան, որոնք կարծէք՝ նախապատմանուած լինին և դատապարտուած անէացումի, ժամանակի յամր թէ արագ հարուածներուն տակ, հակառակ օրհասական յուսահատ, չղաձիգ և նոյն իսկ բիրտ ցնցումներու եւ չարժումներու ենթարկուելով, որ համեմատաբար չատ աւելի մեծ փորձանքներէ անցած, ճկուն եղէգներու նման լծող կուտան փրփրած ալիքներու, խորտակիչ փոթորիկներու գալ անցնիլ, որոց առաջ առժամանակ խոնարհելուց յետոյ կրկին գլուխ վեր կը բարձրացնեն։ Եւ կամ աւելի ճիշտ, այդ փոթորիկն ու աւերները ցնցելով զլխներնիս, կ՚առնեն կը տանին ինչ որ նեխած, փտած, տկարացած, չարցած և աղտեղած է և որմէ յետոյ առողջ արմատը նորընձիւղ կը փթթի, կը զարգանայ և կաճի ու կուռճի, մեծ փոթորիկներին հետեւող պայծառ արեւին կենսատու շողերին տակ, կանաչ ու ծաղկուն, աւելի քան որքան չէր ա-

ռաջ և որքան չը պիտի լինէը նախկին վիճակին մէջ իր համակ ճիգ ու փափագներով հանդերձ։ Ազգերնիս կարողացած են և կարող են տխուր աղէտներից պէտք եղած դասեր քաղել իրենց ազգային ինքնապահպանութեան համար, ապահովելով այսպէս իրենց ապագայ ընթացքն ու յառաջդիմութիւնը քաղաքակրթութեան ընդհանուր մրցումին մէջ։

Ազգերի կեանքն ու երկարակեցութիւն իրենց ներքին կենսունակութեան հետեւանք միայն կրնայ լինելը Առողջ գաղափարներով տոգորուն, ժամանակի արագընթաց յառաջդիմութեան ընդունակ, լուսաւորութեան եւ քաղաքակրթութեան իտէալով, արդարութեան ու ճշմարտութեան գործադրութիւնների ատակ ու փափագող, են. են, ու ատոնց նըւիրուելու կամք ու տոկունութիւն. ահա ամենազօր պայման եւ գրաւականները անոնց կենսունակութեան։ Ապա՛ թէ ոչ, ինչքան էլ կոյր բաղդին, բիրտ ուժին և չրջապատող թանձր խաւարի նպաստաւորած պայմանների տակ մի ազգային պետութիւն ամպերից էլ վեր բարձրանայ, արեւմուտքից արեւելք տիրապետէ և չողչողուն սրի, ժահափիւռ գնդակների և բռնակալ ուժ ու բէժիմի անարգ հարուածներին տակ իր խաւարակուռ օրէնքներ տարածէ սարկացուցած հնազանդութիւններին վրայ, նոյն չափով էլ իր իսկ ձեռներով պիտի փորէ անյատակ անդունդ, ուր պիտի գլորուին զինք ժամանակն ու գիտակցութիւն, ուրկէ չպիտի կրնայ ա՛լ վեր ելնել։

Ահա՛ թէ ինչո՞ւ գիտակցական ոյժեր՝ որքան էլ փոքր և տկար՝ յաղթութեան աւելի մեծ ապահովութիւններ կընծայեն, քան փքած եւ ուռուցիկ բիրտ ոյժեր, որոց կատաղի և յախուռն հալածանքներ անգամ իրենց տկարութեան և փտութեան գերազանց խոստովանութիւններ են ու կը մնան։

Ո՞վ չի գիտեր որ այսօր յարգուած և պատկառանք ազդող Ֆրանսան 1870ի Սըտանի եւ Մ՚էցի չախչախուած և անպատուած հայրերի և մայրերի սերունդն է, որոց Գերմանիան իր յաղթական բանակին և Ֆրանսահ սիրտը պաշարող լծդանութիւնների գոռումների և կրակի տակ գետնին հաւասար դարձունել կը նկրտէր։ — Եթէ Ֆրանսան դժբաղդութիւն ունեցաւ իր երկու սրտահատոր գաւառների ճզակոտոր լինելը տեսնելու և տանելու, այսօր կրնայ բարձրաձայն ուրախանալ որ Պիզմարքի երկաթեայ քաղաքականութեան եւ Մոլթքէի անյաղթելի բանակների ազդեցութեան հետեւանքը, եղած աղետներից աւելի բարձր և արժէքաւոր, վերանորոգուած, վերածնած եւ առոյգ Ֆրանսահ մը գրաւականն եղաւ։

Թէ ինչո՞ւ նոյնպէս մարդկութեան անկեղծ բարեկամները այսօր սրտայոյզ իրենց աչքեր Մանչուրիահ ահեռահայեալի արիւնահեղութիւններից այդ սարսռազդուիչ մարդակուլ աղետներից անդին, գարերով կապած ու սերուկ — բայց կենսունակ ու ընդունակ Ռուս ժողովուրդին — ապագայ ժողովրդական Ռուսիահ սքանչելաւորումը կը տեսնեն . . . ու կը մխիթարուին, Հատատիաբար մի օր ռուս հայրենասէրը, ազատ բոպէական ամէն կաշկանդումներից, նոյնպէս պիտի մխիթարուի ռուս-ճապոնական այս աղէտքի առթիւ, որ եւրոպական հզօր պետութիւնների չի կարողացաձը, քաղաքակիրթ երկիրների հետ սերտ դրացնութեան մէջ անգամ անկարելի և անհնարին երեւցածը, հեռաւոր փոքրիկ կարծուած Ճապոնը կընէ ու գլուխ կը բերէ։ Հատատիաբար Բորդ-Արթիւրի և Մանչուրիահ անմիտ և անգութ մարդկային ջարդերը ռուս բռնապետութեան անկումին, բայց ռուս ժողովրդեան ազատագրութեան նուիրական գոհերը պիտի լինին։

Արդեօք այդ յոյսերի կէսին կէսը անգամ կարելի՞ է ասել Թուրքիահ համար, որը ժամանակով իր արիւնոտ սրի ուժով տիրապետական ծաւալումից յետ, սկսեց իյնալ, իյնալ եւ չախչախուիլ, չախչախուիլ և թափթըփիլ ֆիզիքապէս, զի զինք բռնելու և ամուր պահելու համար ներքին բարոյական ոյժ չկար ու կը պակսէր բոլորովին . . . Այդ էր կարեւորը, բայց նա անգիտեց եւ չուզեց ճանչնալ։ Ուրկէ ահա՛ իր անգառնալի անկումի դատապարտութիւն։

Իսկ մե՞նք — Մենք ո՛չ Ռուսերենք և ո՛չ իսկ Հըլացիները որ մեր էլ մէկ երկու թէ հարիւրհազարաւոր գոհերի արիւն մխնոյն ցնցում առա-

ֆացնէ ուշադրութիւն մէջ, քայց հոգ չէ ուրիշների վկայութիւնների պէտք չը կայ մենք մեզ ճանչնալու համար։ Մեր ազգային մեծամեծ ազէտներն օտարների և մեր թշնամիների կողմէն մեր փոքրութեան տակ ծածկելու ունայն ճիգերը՝ թերահաւատներն անգամ հաւատի բերելու չափ սակայն գերազանց ապացոյցներ կը մընան որ մեռած ու թաղուած չենք անոնց տակ, թէև չատ տարբեր ու աննպաստ լինին մեր դիրքն ու պայմանները։ Մեր ազէտներ որքան էլ ծանր, կրնան սակայն օգտակար դասեր լինել մեր ներկայ ու ապագայ գործունէութեան համար և նոյն իսկ գրաւականը, եթէ ժողովուրդը՝ փոխանակ անտարբերութեան, ատոնց մէջ պէտք եղած օգուտը ձեռք բերէ և այդ հարուածների տակ, փոխանակ թմրելու, սթափի ու անոր համաձայն գործէ և ընթանայ։

Մ Է Ն - Մ Է

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՒ ԽՆԴԻՐԸ

Լսած լինք թէ Վեհ. Կաթողիկոսը Թիֆլիս պիտի երթար, բայց իր անհանգստութեան պատճառով յետաձգեր էր իր այդ ճանրորդութիւնն և Ալեքսանդրապոլ կը Մնար։

Այժմ կը տեսնենք որ Թիֆլիսէն դեկտ. 14/27ին գրած են Կ. պոլսի «Բիւզանդիոն»ին հետեւեալը.

«Կիմանանք թէ Ն. Ս. Օծութիւն Ընդհանրական Հայրապետը կալուածական խնդրոյն վրայ այս օրերս դարձեալ պիտի ընէ ներքին գործոց Նախարարին, խնդրելով վերադարձուիլը։

«Ն. Ս. Օծութիւնն իր տկարութենէն տակաւին չէ ապաքինած։ Անկողնէն չէ եղած։ Բաւականին լաւ է. բայց մարմինը խիստ թոյլ է։»

Վեհ. Կաթողիկոսը դեկտ. 8/21ին հասած է Տփղիս ուր մեծ պատուով իրեն դիմաւորած են տեղական իշխանութիւնները և ժողովրդեան խուռն բազմութիւն մը։

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Աւստրաւհունգարական դեսպան պարոն ֆը Քալիչէի կողմէն պատուրակութիւն մը ներկայանալով Ս. Պատրիարքին շնորհակալութիւն յայտներ է այն դիւրութիւնների համար որոնք ընծայուեցան իշխան Բաքոչիի հետևորդներէ իշխան Թոկոլիի աճիւնները Ռոտոդոյի Հայերի գերեզմանատունէն հանուելով յանձնելու մասին։

– Սուչաւայի անուանի Հայերէն վսեմ. Ասպետ Գաբրիէլ Ֆօն Բրունգուլ (Հանգուցեալ բարեյիշատակ Տօքթ. Յօհաննէսեանի փեսան) որ Կ. պոլիս կը գտնուի այժմ, այցելելով Բէբայի մեր Ազգ. Արհեստանոցն ու Էսայեան և Նարեկեան վարժարանները, դրամական նուիրատուութիւնները ընծայեր է Տիգրանակերտի առաջնորդ Արժ. Եզեկիել Ծ. վրդ. Կ. պոլիս գալու արտօնութիւն խնդրեր է Ս. Պատրիարքէն։

— Կ. պոլսի լրագիրները կը գրեն թէ Բազէշի կուսակալն երեսի խաւմների և հետևորդների հետ մէկ տեղ այցելեր է Մուշի Ս. Կարապետի վանքն ուր պատուով ընդունուեր և գիշերեր է։ Միաբանութիւնը խնդրագիր մը մատուցեր է կուսակալին, ուշադրութիւն հրաւիրելով վանքի քայքայուած վիճակին վրայ։

— Պայազիտէն և Գարաքլիսէն, ուր սաստիկ ձմեռ կընէ և հիւանդութիւններ սկսած են տիրել, Կ. պոլսի պատրիարքարանին դիմելով նպաստ խնդրած են։

ԱՐԺ. Տ. ՅՕՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ Ա. ՖԱՀԱՆԱՑԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՊՈՒԼԿԱՐԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԼՏՖԵՐԻՆ ՎՐԱՑ

Մարսէյլի Հոգևոր Հովիւ Արժ. Տ. Յօհան Ա. Ֆահանայ Մանդակունիին, որ երկար տարիներ պաշտօնավարած է Պուլկարիոյ մէջ, նոյն երկրի Հայերի կրթական և առաջնորդական խնդիրներին նը կատմամբ Կ. պոլսի պատրիարք Ամեն. Օրմանեան Սրբազանին ղրկած ընդարձակ տեղեկագիրը հրատարակած էինք Ապրիլեանի 22րդ թուին մէջ։ Այդ տեղեկագրի առթիվ հետևեալը կը կարդանք Գ. պոլսի «Սուրհանդակ» լրագրին մէջ։

Մարսիլիոյ Հոգևոր Հովիւ Տ. Յովհան Ա. քհնյ. Մանդակունիի Պուլկարիոյ վարժարաններու մասին պատրիարքարան ղրկած ընդարձակ եւ կարևոր տեղեկագիրը յանձնուած է վարչական դիւանի ուսումնասիրութեան, եւ յետոյ պիտի յանձնուի խառն ժողովոյ նկատառման։ Ս. Պատրիարքը օրհնութեան և գոհունակութեան գիր մը պիտի ղրկէ Տ. Յովհան քհնյ. ի, գնահատելով իր այս աշխատութիւնը, քանի որ ինք Մարսիլիա գտնուելով հանդերձ, զգացած է այսպիսի տեղեկագրի մը պատրաստութեան պէտքը և իր ի Պուլկարիա երկարատև բնակութեամբ ձեռք բերած փորձառութիւններով պարզած է իր տեսութիւնները Պուլկարիոյ վարժարանաց կացութեան մասին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պարիզ, 2 յունուար ի 1905 թ.

Ապրիլեանի անցած թուականի 22 թիւի մէջ տպագրուած էին Ս. Էջմիածնի օրագրութիւններից քաղուած յետագայ տողերը. «Օգոստոսի 4ին Օհնօգը լսելով Մեսրովբ քահանայ Մելեանի գործը, որ պահանջում էր Սինօդից 700 րուբլի, իբր թեմական տեսչութեան ժամանակից մնացած 1333 ր. 33 կոպ. առճկի տեղ, վճռեց գործը տալ դատաստանական մասը քննելու, որպես զի տրուի ի դատ մարմնաւոր իշխանութեան, համարելով նորա յայտարարութիւնը նո. 56 զրպարտութիւն ու միանգամայն անպատուաբեր Սինօդի համար».

Այս առթիւ խոնարհաբար խնդրում եմ հաճել դիւրութիւն չնորհել ինձ յայտնելու պատուական թերթիդ ընթերցողներին, որ արդարև իմ նո. 56 յայտարարութեամբ Սինօդի անդամների մի վարմունքի առթիւ քո. ղ՝քում եմ Սինօդին և իմ այս բողոքը «միանգամայն անպատուաբեր Սինօդի համար» լինելուց է՛լ աւելի էր։ Սինօդը իմ բողոքը յանձնում է իր դատաստանական մասին քննելու, որ ինձ տան դատի մարմնաւոր իշխանութեան. այն ինչ ես սպասում էի, որ մարմնաւոր իշխանութիւնը քննի ու վճռի իմ բողոքի ճշմարիտ թէ զրպարտութիւն լինելը, օրերումս ըստանում եմ պաշտօնական մի գրութիւն մեր կողմերի գործակալ քահանայից, ի 1 հոկտ. 1904 թ. N 796, ուր ինձ գրուած է. «Տփղիսի կոնսիստորիան իր N 3983 գրութեամբ պատուիրում է ինձ ծանուցանել ձեզ որ Սինօդը իր դատաստանական մասի զեկուցումը չսկզուց յետոյ վձռել է կարձել ձեզ վրա տարդած մեղադրանքը»։

Իսկ ինչ վերաբերում է դրամական խնդրին, ոչ թէ 700 ր., այլ ամբողջ 1333 ր. 33 կ. առճկից մնացորդ գումարը լրիւ ստացած եմ մեր հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ։

Անկախ այս ամենից՝ խնդրագրութիւնդ իմ մասիս բարեհաճած էր գրելու՝ «Արժ. Տ. Մելեան, որ կը քահանայագործէ այժմ ի Բարիզ»։ Սակայն սա մի հիմունքին սխալ է. ես բնաւ քահանայագործութիւն չեմ անում Պարիզում, այլ միայն իմ անձնական տարութիւնը դարմանելով եմ զբաղած։

Օրհնութեամբ առ ձեզ՝

Մ. Ա. Ր. Մելեան

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ատրպատականի մայրաքաղաքի՝ «Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Միացեալ ընկերութիւն»ը հրատարակած է 1903–1904 ուսումնական տարեշրջանի իր տեղեկագիրը և հաշուեցոյց։

Այս ընկերութիւն որ վեհ. Շահընշահի հովանաւորութեան տակ ընդունուած է յատուկ հրովարտակով մը, մի քանի տարիներէ ի վեր կը գործէ առանց աղմուկի և արդիւնաւոր կերպով։ Ատրպատականի զանազան գաւառներին մէջ բացած է 11 դպրոցներ, որոնցմէ 4ը ընկերութեան հաշուով և 7ը յատուկ բարերարներու օգնութեամբ կը պահուին։ Այդ վարժարանների մէջ կուսանին, միջին թուով, 420 սաներ (320 աշակերտ և 100 աշակերտուհի)։ Ջմեռներն ատոնց թիւը կը հասնի մինչեւ 5–600ի։ Ընկերութիւնն ունի նաև 2 մանկապարտէզներ Դաւրէժ քաղաքին մէջ, մէկը Լիլաւաի և միւսը Բերդի թաղին մէջ։

Ընկերութիւնը կը պահէ Դաւրէժ քաղաքի «Արամեան» դպրոցին մէջ գիւղացի 3 որդեգիրներ, զանոնք ի. րենց գիւղերի համար ուսուցիչ պատրաստելու նպատակով։ Որդեգիրները կապրին վարչական անդամուհիներին մօտ, գտնուելով անոնց անմիջական խնամակալութեան տակ. կը հոգացուին անոնց ուտելիքը, հագուստը, դպրոցական թոշակն ու դասական պիտոյքները։

Ղալայի դպրոցների տեսչութեան առաջարկին համեմատ, ընկերութիւնը համազգեստ տուեր է 9 խիստ չքաւոր աշակերտների և աշակերտուհիների, վարժուհիների տուած տեղեկութիւններին համեմատ, համազգեստ ժամակարարեր է իր մանկապարտէզների չքաւոր սաներին և սանուհիներին։ Առաջնորդարանի առաջարկութեամբ և վկայութեամբ ճանապարհածախք տուեր է հայրենիք վերադարձող կամ պանդխտութեան դիմող բազմաթիւ արկածեալների, նպաստ յատկացուցեր է գլխաւորապէս տնների առթիվ քաղաքի կարօտ ընտանիքներին, ծախսելով Արժ. Տ. Աւետիս քահանայ Շաղոյեանի ձեռքով եգիպտոսի մէջ հանգանակուած դրամը։ Զարմանալի է որ այսպիսի արդիւնաւոր ընկերութեան մը համար արտասահմանի Հայերէն եղած միակ օգնութիւնն է յիշեալ Արժ. քահանայի ձեռքով եղածը, որ բաւական ժամանակ Ատրպատականի մէջ կեցած լինելով, տեղին վրայ և ամէն ձամբ ստուգած է այդ ընկերութեան օգտակարութիւնը. իսկ արտասահմանի Հայեր աղմուկ չեղած տեղը գոյնէութիւն եւ օգտակարութիւն տեսնել չեն կարծեր։

Այս տարի Ռուսահայն սոյն ընկերութեան նպաստած անձերի չարքին մէջ կը տեսնենք գլխաւորապէս հետևալ անունները.

Տիար Տիգրան Ալֆրիկեան տուեր է 10,000 զռան (1) Բաքուոյ, Դիզաքէ–Ռահուա և Նախիչեան թէ փէ գիւղերի երկսեռ դպրոցներին իրենց տարեկան նպաստը։

Տիար Ալէքսանդր Մէլիք-Ազարեանց՝ 1734 զռան (300 րուբլի) տարեկան նպաստը Որմիի ուսումնարանին։

Տիար Ստեփան Տէր-Օհանեանց 1200 զռան տարեկան նպաստը Դիլէքի դպրոցին։

Տիկին Թամար Ագամեան (Բագուհին) 600 զռան (100 րուբլի) նուէր եւայլն։

Ընկերութիւնը 1903 յուլիս 1ին մինչև 1904 յունիս 30 անգամվայ ճարներէ և նուէրներէ հասոյթ ունեցեր է 35429 զռան եւ 36 կպ. իսկ ծախք ունեցեր է 40645 զռան և 84 կպ.։ Ընկերութիւնը 1904 յուլիս 1ին պատրաստ ունէր իբրև դրամագլուխ 56,399 զռան և 49 կպ.

Սոյն տեղեկագրի մէջ ուրախութեամբ կը կարդանք հետևեալ տողերը.

(1) Մէկ զռանը գրէթէ կէս ֆրանգ է։

«Մեծ. Պրն. Տիգրան Ազբիկեան, որ իր հաշուով պահում էր 2 երկսեռ դպրոց Բարանդուզ գաւառի Թրքաբոս Բաբառու եւ Դիզաթէքի հայ գիւղերում 4–5 տարուց ի վեր, կանխելով մի իրական, չշափելի ծառայութիւն մատուցանել լքուած, տըն-տեսապէս քայքայուած և իր ազգային առանձնայատկութիւնները կորցրած պարսկահայ գեղջուկի կրթական գործին, յղացել է մի վերին աստիճանի մարդասէր միտք, այն է՝ 39 հայաբնակ գիւղ ունեցող, 1200 տունից բաղկացած Որմի գաւառը իր շրջակայքով պատել դպրոցական ցանցով, ուր չրջապատող օտարազգեան տարրերը, իր մահաշունչ երթը լոյս բացած, սպառնում է կլանել նրանց . . . . Մեծանուն բարերարը որոշել է այդ դպրոցների թիւը, որոնք երկսեռ պիտի լինին, առ այժմ հասցնել 20ի, նպատակ յատկացունելով իւրաքանչիւրին տարեկան 250 թուման։ Դպրոցները պիտի բացուին պարբերաբար, տարեցտարի հինների վրայ 2 նորը աւելանալով»

Երանի՛ թէ Աֆրիկեանի օրինակին հետեղ ուրիշ բարերարներ ալ երեւան գային հեռագնեայ։

Ընկերութիւնը կոչ ընելով ամէն տեղի Հայերին՝ օգնել իր ձեռնարկած ծանր գործին, Պարսկաստանի Հայ գիւղացիներին մէջ կրթութիւն տարածելու և տնտեսական թշուառութիւնները կարելի եղածին չափ ամոքելու սուրբ գործին, կաւելցնէ հետեւեալ տողերը, որոնց վրայ մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք։

«Կարիք կա՞յ կրկնելու հազար անգամ ծանծաղուած այս պարզ ճշմարտութիւնը, բացորոշ իրողութիւնը, թէ պէտք է աշխատել լոյն չափով օգտուել ներկայ խիստ նպաստաւոր հանգամանքներից։ Կանցնի անդարձ այս բարեբաստիկ ժամանակը, կը փոխուին հանգամանքները և այն ժամանակ . . . այն ժամանակ ամէն յոյս կորած պէտք է համարել . . . ։»

Սոյն ընկերութեան գրամական նպաստ, դասական առարկայներ, ընթերցանութեան գիրքեր, պարբերական հրատարակութիւններ, նամակ եայլն ուղարկել կամ մանրամասն տեղեկութիւններ ստանալ ցանկացողները դիմելու են այս հասցէի.

Société Unie de Bienfaisance des Dames Arméniennes
TAURIS (Perse)

ՓՕԼԷՐԱՆ ՎԱՆԻ ՄԷՋ

Վանի կուսակալութիւնը դեկտ. 17/30 թուով հեռագրած է կ. պոլիս ձեռնհաս պաշտօնատան թէ վանի մէջ քօլերայի 5 դէպք պատահած են որոնց երկուքը մահառիթ։

Ձեռնհաս պաշտօնարանը ի. Փոխն ինդրեց պղտարարել վանի կուսակալութեան որ վան քաղաքի թաղերէ մէկին մէջ ծագած քօլերայի ծանալումն արգիլելու համար, քաղաքէն մեկնողները բժշկական քննութեան ու հականեխման ենթարկուին, թաղերի և գիւղերի մուխթարներն ու իմամները տեղական իշխանութիւններին իմացունեն հիւանդները, կառավարութեան կողմէ ղրկուած բժիշկները մի առ մի քննեն հիւանդները և անոնք որ կասկածելի ախտանիշերով վարակուած են, քաղաքէն դուրս հաստատուելիք մասնաւոր հիւանդանոցների մէջ դարմանուին. իսկ անոնք որ չեն կրնար փոխադրուիլ, իրենց բնակարանների մէջ դարմանուին և վարակեալների հետ յարաբերութիւն ունեցող անձերը հինգ օր բժշկական հսկողութեան ենթարկուին, փչերէ մեռնողները, քաղաքէն դուրս, թափուր հողերի մէջ չին ուած գերեզմաններուն թաղուին, հիւանդներին ունեցած արժէքաւոր իրեղէնները խստիւ հականեխուին, իսկ անարժէք իրեղէններն ու հագուստները այրուին, փողոցները մաքրուին և աղտեղութիւնները այրուին և քօլերայի միքրոբները չնչելու համար՝ չուրն եռացուելէ վերչ խմուին։

— Վանէն դեկտ. 18/31 թուով կ. պոլիս քաշուած հեռագիր մը կիմացունէ թէ նոյն օր քաղաքին մէջ քօլերայի 22 դէպք պատահած եւ վրակուածներէն 13ը մեռած են։

— Վանէն հետզհետէ եկած պաշտօնական հեռագրալուրերը հետեւեալ տեղեկութիւնները կուտան քաղաքին մէջ քօլերայի ընթացքին վրայ։

Դեկտ. 19/1 յունուարին 5 դէպք և 7 մահ. դեկտ. 20/2 յնր.ին 4 դէպք և 7 մահ. դեկտ. 21/3 յնր.ին 8 դէպք և 8 մահ. 22/4ին 9 դէպք և 10 մահ. 23/5ին 6 դէպք և 5 մահ։

Կ. պոլսէն կարին ղրկուած զինուրական բժիշկներին (Տեսնել Արմենիա թիւ 20) հրաման գնացած է փութով վան երթալու։

ԹԻՒՐԻԱԼԷՆ ԼՈՒՐԵՐ

Ձմռանէն կը հաղորդեն թէ երկու ամսէ ի վեր ժանտախտի նոր դէպք չէ պատահած հոն և հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։ Առողջապահական յանձնաժողովը նկատի առնելով համաճարակին վերադարձի հաւանականութիւնը, կը չարունակ առողջապահական նախահոգ սիլոյների գործադրութիւնը։ Քաղաքի զանազան թաղերին մէջ մուկերը ջնջելու համար քիմիական դեղեր դնել տուած է, որոնց ազդեցութիւնը փորձով հաստատուած էր ասկէ առաջ։ Քաղաքապետական սնտուկն ալ սատկած կամ ոչլ բռնուած ամէն մկ մուկի համար 40 փարա վարձք կը վճարէ բերողին։ Յատ և խոնաւ թաղերի մէջ խոնաւած բնակիչները բարձր և չոր տեղեր կը զետեղուին։

— Սուլթանը հրամայեց բժիշկներ եւ չրջուն հիւանդանոցներ ղրկել Մանչուրիա, փոխադարձութիւն մ'ընելու համար Ռուսիային որ միևնոյն օգնութիւնները ղրկեց Թեհրան, Թիւրքեստանական պատերազմի միջոցին։ Կ. պոլսի ռուսական դեսպանը մերժեր է չրջուն հիւանդանոցներ ղրկելու առաջարկը, բայց յայտարարեր է թէ կընդունի վիրաբուժական վերաբերեալ նիւթերը։

Կարմիր Մահիկի յանձնաժողովը մտադիր է դարձեալ ղրկել Ծընէվի Կարմիր խաչի ընկերութեան, օգնելու համար վիրաւորուած թէ՛ ռուս և թէ՛ ճաբոնցի զօրքերին։

— Կ. պոլսի մէջ զրոյց կը պտըտի թէ եգիպտի ապստամբ Արաբները նոյն նահանգի Սանա մայրաքաղաքը ժանելով տիրեր են անոր։ Մանրամասնութիւններ չկան. հաղորդակցութիւնները խզուած են։ Իմացուած է միայն որ ապստամբները թնդանօթներ ունին որոնք զետեղած են քաղաքին իչխող լեռներուն վրայ։

ՌՈՒՍԻԱ

Դատական գործերի նախարար Մուրավիէֆ կոմսն իր հրաժարական յետ առաւ։

— Ժողովուրդին մէջ ծագած յեղափոխական չարժումներն որոնք Ռուսիոյ ներքին խռովութեան անխուսափելի հետեւանքն են, հին պահպանողական կուսակցութեան պատրուակ ժ'եղան ցարի վարանոտ մտքին վրայ ազդելու թէ ներքին գործերի նախարար Սվիատոբոլք Միրսքիի ազատական ձգտումները վտանգ կը սպառնան կայսրութեան, Ուստի ցարն իր յուսադրական նոր ուքազի (Տեսնել Արմենիա թիւ 21 և 22) հրատարակման հետեւեալ օրն իսկ (դեկտ. 27) մէկ յայտարարութիւն հանեց որով այդ ուքազի ներչնչած յոյսերը կոչնչացունէր գրէթէ, առարկելով թէ խռովարոյց ցոյցերի չարունակութիւնը արգելք կը հանդիսանայ ժողովրդի գուժարման ազատութիւն տրուելուն համար։

Ռուսիոյ ներկայ վիճակն ու անոր պէտքերն աւելի թափանցիկ աչքով դիտող ռուս հայրենասէրները չեն վարանիր ըսելու, իրենց ճշմարտախօսութեան համար անձերնին վտանգի ենթարկելով, համարձակիլ ուղերձներով և կամ այլ միջոցներով յայտարարել ցարին թէ Ռուսիոյ ներկայ վարչական քաշուած դրութիւնը դէպի կործանում կը տանի կայսրութիւնը և սուր գարման մը տանելու համար անհրաժեշտ է որ ժողովուրդը մասնակից երկրի վարչական գործերին. ուրիչ խօսքով՝ Սահմանադրութիւն մը հաստատուի և ներսփոխանական պրութեամբ ժողովներ կազմուին կառավարութեան գործերին վրայ հսկելու համար։

— Բագուի չրջակայները գանուող քարիւղի գործարանների աչխատաւորները գործադուլ ըրած են։ Ելեքտրականութեան հաղորդիչ խողովակները կարուած են. թրամվայների չրջագայութիւնն ընդհատուած է։ Լրագիրները չեն հրատարակուիր։

— Սրևանի նահանգին մէջ ուր քօլերան չատ խիստ կերպով տարածուած էր, վերջին լուրերուն նայելով սկսած է նուազիլ։ Երկրին ուրիչ կողմերն ալ քօլերան դէպքերն սկսած են պակսիլ։

— Վարչաւիսի Բատամ քաղաքին մէջ դեկտ. 12/25ի գիչերը ծանր խռովութիւններ ծագեցան որոնք զսպելու համար զօրքեր հանուեցան։ Գնդապետ Պուլադով բազմութեան մէջ նչմարեց երիտասարդ մը որ կերեւէր թէ չատ գերգուռած էր և կարմիր դրօչակ մը ձեռքը բռնած կը ծածանեցուներ։ Զօրքերուն հրամատար գնդապետը մօտեցաւ անոր և բռնեց. բայց երիտասարդն իսկոյն րէվոլվէր մը հանելով երկու անգամ կրակեց գնդապետ Պուլադովի երեսն ի վեր որ անմիջապէս այնտեղ ինկաւ մեռաւ։ Զօրքերն սկսան հրացան պարպել ժողովուրդին վրայ։

— Բէդէրսպուրկէն կը հաղորդեն թէ յունուար 1ի կիրակի օր Վարչաւիսի մօտ վիրաւորուած ոստիկանապետը մեռեր է յունուար 6ին։

Մեծ չփոթութիւն կը տիրէ կայսրութեան նահանգներուն մէջ։ Խարքովի մօտ, ժողովուրդը ոսկի ելնելով, կրակի տուեր են բանտերը։

Նախուի։ Պալախանիի մէջ յնր. 5ին րնդհարուած ժ'եղեր է գործադուլ անողնեներին և խազախաներին միջև. 6 գործատեր սպաննուեր են. խազախներէն ալ մէկը մեռած և չատեր վիրաւորուած են։

Կըսուի թէ ներքին գործերի նախարար Իչխան Միրսքի իրեն դէմ եղած հակառակ թիւններէն յուսահատած հրաժարական տուեր է և թէ ցար ալ զայն ընդունելով Կովկասի կառավարիչ պիտի նչանակէ զինք։ Իչխան Միրսքիի հրաժարման գրոյցներ քանիցս ելած են արդէն։

— Եկատերինոսլաւի ոստիկանական գործերի պետին, Ջ. Դաժէրի վրայ յարձակուած ժ'եղեր է յնր. 6ին։ Ազնուականների դասակարգին պատկանող Տ. Իվանիձէի իրրև լանդրաժատոյց ներկայանալով Տ. Դաժէրին, րէվոլվերի հարուած մը տուեր է անոր, բայց չէ հասեր նըպատակին։ Անմիջապէս ձերբակալուեր է. բայց մեռածեր է ուէ բացատրութիւն տալ իր ըրածի չարժառիթին վրայ։

ԳՆԴ. ԻՍԱՀԱԿ Ց. ԹՈՒՄԱԹԵԼԵԱՆՑ

Բորդ Արթիւրի քալարի պաշտպաններին մէջ, ռուսական թերթերը մասնաւորապէս կը յիչեն թնդանօթաձիգ գնդապետ Իսահակ Ցարուխթիւն Թոխաթելեանցի դիւցազնական քալագործութիւններն, որոնց ի վարձատրութիւն Ս. Գէորգի պատուանչան և ոսկի սուր մը տրացած է ցարէն։ «Նովի Բրայ», Բորդ Արթիւրի պաշտօնաթերթը, չատ դրուատալից յոդուածով մը կը խօսի գնդապետ Իսահակ Ց. Թոխաթելեանցի վրայ և կը պատմէ թէ ի՛նչպէս իր գունդի գլուխն անցած ա. րիաբար պաշտպանեց «Բուրուբադքին» և «փոքր Արթիւ» ամրոցները, թչնամիի մահափուռ կրակին տակ, հիանալի պաղարիւնութեամբ վարելով նչանաձգութիւնը։ Իսահակ Ց. Թոխաթելեանց թեթեւապէս վիրաւորուեր է վերջին արիւնռուչտ կռիւներին ժամանակ։ Քանի մը ամիս առաջ իր քալագործութիւնների համար գնդապետի աստիճանին բարձրացած և Ս. Վլատիմիր պատուանշանի գ. կարգն ստացած էր։ Պօքսըրների չարժումին ժամանակ ինք կը հրամայէր միլազգային հրետանիի գունդին և անձամբ վարեց Բէյդան բերդին դէմ յարձակումը, որի միջոցին ճաբոնցիները կատաղի քալագործութիւն ցոյց տուին, ամէնէն առաջ իրենք խոյանալով դէպ առաջ։ Ձիական խռովութիւններէն վերջ, գնդապետ Իսահակ Ց. Թոխաթելեանց ղրկուեցաւ Բորդ Արթիւր, ուր կը մնար մինչև այժմ իբրև մարզիչ հրետանիի զօրքերու։

ՌՈՒՍԵԻՃԱՌՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Բորդ Արթիւրի մէջ գտնուող ռուս սպաները, անձնատուութեան պայմանագրին համեմատ, ազատ թողուած են կամ իբրև գերի մնալ ճաբոնցիներուն քով կամ իրենց պատուի վրայ խօսք տալով թէ ճաբոնցիներուն դէմ չպիտի կռուին մինչև այս պատերազմի վերջը, ազատ թողուել

Ռուսիա վերադառնալու Ոմանք նախադասած են իրենց զօրքերի հետ մէկտեղ գերի երթալ. իսկ ուրիշներ ալ պահանջած խստութիւնը տուած են Ռուսիա վերադառնալ կարենալու համար։ Այս վերջիններուն մէջ կը գտնուի և զօրավար Սգօսէլ որին մեծ պատիւներ կընէ յաղթական բանակին զօրապետը Նօկի, իբրև քալ զինուորականի մը որ թէև թշնամի բանակի մը զօրապետ, իր հայրենիքի պատուին համար ամէն նեղութիւններ յանձն առնելով կռուած է դիւցազնական դիմադրութեամբ մը։ Ուրդէն Միքաուն ալ այդպէս հրաման ղրկած էր զօրավար Նօկիին։

Զօրավար Սգօսէլ Ռուսիա վերադառնալու համար, ճաքոնական նաւահանգիստ Նակազաքիէն Ֆրանսական Մէսաժըրի ընկերութեան «Օսդրաիէն» չոգենաւը պիտի մտնէ։ Այդ չոգենաւ կը հասնի Մարսէյլ փետրուար 21ին։

— Գերի ինկած ռուս զօրքերուն Բորդ Ալթիւրէն տեղափոխութիւնը վերջացած է յունր. 7ին։ Գերիներու գումարն է 24,369 որոնց մէջ կան 878 սպաներ և կառավարական պաշտօնեաներ։

— Բորդ Ալթիւրի խնդիրն այժմ վերջացած լինելով, ճաքոնները սկսած են աւելի ոյժ տալ Մուքտէնի կողմը ուրկէ հաւանական է որ քիչ առէն սկսին գալ զօրավար Գուրոպադքինի հետ ընդհարման լուրեր։

— Ռուս կառավարութիւնը 231½ միլիոն րուբլիի նոր փոխառութիւն մը պիտի ընէ, հարիւրին 4½ տոկոսէն։ Այս 4րդ փոխառութիւնն է որ կընէ ներկայ պատերազմի ընթացքին մէջ,

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Ադըզանիստանի Էմիրին գահաժառանգ որդին Հնդկաստան գնացեր է բազմաթիւ հետևորդներով 16 տարեկան է։ Լորտ Ռըրզըն, մեծ պատիւներով ընդունելներ է զինք։

— Նիւ Եորքէն յունր. 5ին հեռագրած են ֆրանսական թերթերին թէ այնչափ չատ ձիւն եկեր է որ Նիւ Եորքի փողոցներէն ձիւնը վերցնելու համար 18600 հոգի կաշխատին 5000 սայլերով։ կը կարծուի որ այդ գործողութիւն մէկ շաբաթ կը տեւէ։ Փողոցները տեղ տեղ մինչև 1½ մէդր դիզուած է ձիւնը, կըսուի։

— Ճիպուդիէն կիմացուննեն որ Ասպիրնիա գնացող գերմանական պատուիրակութիւնը յունր. 6ին հասեր է Ճիպուդի ուր տեղական ֆրանսական իշխանութիւնները պատիւներով ընդունելներ են զիրենք և իրենց ճանապարհութիւն չարունակելու ամէն դիւրութիւններ տուեր են անոնց։

— Գանատաի Օդդավա քաղաքէն կը հեռագրեն թէ այս վերջին շաբաթներ 1000ի չափ Ռուսիացի Հերեանները հասեր են Մօնդրէալ։ Մօնդրէալի քաղաքապետը դիմեր է կառավարութեան որ դաշնակցական իշխանութիւնները միլիամեն արգիլելու համար այս տեսակ գաղթականութեան մը Գանատա գալը։

ԾԱՆՈՒԱԿՈՒՄՆԵՐ

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ
ԲԱՅՅԻՒ

«ԿԱՑԾԵՐ» հատոր առաջին, գինն է 5 չիլինգ

և

«ԿԱՑԾԵՐ» հատոր երկրորդ և վերջ (լիակատար) գինն է 7 չիլինգ.

«Կայծեր»ի Բ. հատորի բաժանորդները պէտք է ուղարկեն մեզ անդորագրերը, իրենց այժմեան հասցէն և մէկ չիլինգի նամակադրոշմ ճանապարհածախի համար։ իսկ նորատիպ «Կայծերի» առաջին հատորը գնելու դէպքում, կը զիջուի այդ պահանջուած մէկ չիլինգը։

Րաֆֆիի վերլերս լոյս տեսած «Ովսաննուէլ» — 8 չիլինգ, «Դաւիթ-բէկ» - 8 չիլ., «Ոսկի Աքաղաղ» - 3 չիլինգ և միւս գրքերը յանկացողները պիտի ուղղակի դիմեն մեզ հետևեալ հասցէով —

Mm RAFFI,
32, Richmond gardens,
Shepherd's bush,
London, W.
(England)

ՀԱՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձին առթով 1894 թուականին հրատարակուած այս միաձալ դիրքով և լուսատիպ (phototypique) չքեղ պատկերի մեծութիւնն է 50×35 հարիւրորդամէթր և տպուած է 70×45 հարիւրորդամէթր քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէյտեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին, Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի, պատկերը և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրները, անոնց գրէթէ ամէնքի խմբագրապետների պատկերներովը։

Գինն է 4 ֆրանք, ճանապարհածախքը մէկտեղ հաշուած. իսկ Պարսկաստանի համար 2 ֆրանք և 50 սանթիմ։

***

Գալէմքեարեան Հ. Գ. — Պատմութիւն Հայ լրագրութեան իսկզբանէ մինչև մեր ժամանակը. Հատոր Ա. 1794–1860։ Մէկ լուսատիպ պատկերով։ Գինն է, ճանապարհածախքովը մէկտեղ, 2 ֆր. և 50 սնթմ.։

Վերոգրեալ թէ՛ պատկերը և թէ՛ գիրքը կարելի է ստանալ Արմէնիահի խմբագրատունէն, արժէքը կանխիկ ղրկելով։

Արմէնիահի խմբագրատան մէջ ծախու գտնուած գիրքերի ժանրաժացուցակը հրատարակուած է Արմէնիահի 17րդ չրջանի 38, 39 և 40 թիւերուն մէջ։

Այդ թիւերէն յատկապէս աւելի տպած լինելով, պատրաստ ենք ձրիապէս ղրկել անոնց որոնք կը փափաքին մեր գրացուցակները ունենալ, եթէ գոնէ 50 սանթիմ ղրկելով գիրք ուզեն մեզնէ նախապէս. այդ ուղուած գրքի ծրարին մէջ դրուելով կը ղրկուին գրացուցակներն ալ։

Աւելն երկրի փոստերը, քանի՛ սան թիմի համար ալ լինի, մանաւանդ փոստ կուտան մեզ վճարուելու համար Մարսէյլի մէջ։

"ԱՐՄԷՆԻԱ,, Ի ՅՈՒՇԱՐԱՐ

Շատեր կը փափագէին ունենալ Արմէնիահի Ա տարեշրջանի (1885–86) թիւերն որոնք հայկական խնդրին հայ գաղթականութիւնների ուշադրութեան առարկայ դառնալուն ընկերական պատմութիւնը կը ներկայացնեն։ Բայց որովհետև այդ թիւերը բոլորովին սպառած են, նոյն տարեշրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն 30ի չափ ամփոփուած են այս Յուշարարի մէջ, մի քանի թղթակցութիւններով մէկտեղ որոց մասին խօսուած է այդ առաջնորդող յօդուածների մէջ։

Որպէս զի Արմէնիահի բարեկամները կարենան դիւրութեամբ տարածել Արմէնիահի Յուշարարն իրենց շրջանների մէջ, աժան մի գին նշանակուած է։

Արմէնիահի Յուշարարը իր յառաջաբանով մէկտեղ կը բաղկանայ 124 երեսներէ. ութածալ դիրքի վրայ տպագրուած։ Գինն է 1 ֆրանք և 40 սանթիմ։ Տարածելու համար 10 հատ մէկէն առնողին, փոխանակ 14 ֆրանքի, 10 ֆրանքով (2 տոլար) կը ղրկուի ապահովագրուած ծրարով։

Արժէքը կանխիկ չղրկուած ապսպրանքները չեն գործադրուիր։

ՇԷՔՍՊԻՐԻ ՀԱՄԼԷԴԸ

Շէքսպիրի ՀԱՄԼԷԴԸ որ արևմտեան աշխարհաբար լեզուով հայերէնի թարգմանած է քալ անգլիագէտ Տիար Գարեգին Զ. Փափազեան, կարելի է ստանալ նաև Արմէնիահի խմբագրատունէն։

Տպագրուած է վիէննայի Մխիթարեանց տպարանը, մաքուր թղթի վրայ և ունի մեծ ութածալ դիրքով 183+իգ երես։

Գինն է 2 ֆրանգ և 50 սանթիմ։

Եղիազար Մուրատեան. Քննական պատմութիւն Աբշակ Բ.ի և անոր պապ որդւոյն։ (Հայոց պատմութեան մէկ կարևոր կէտին վրայ քննադատական տեսութիւն մ՚է որի համար Մ. Աղաբէկեան գրած է թէ «Հեղինակին այդ ձեռնարկութիւնը պատիւ է բերում իրան և այն ազգին, որին պատկանում է պատմութիւնը»)։ 2 ֆր.

Բակուրան. Կիպրոս կղզի (Ա. Խարհագրական և պատմական տեսութիւն։ Բ. Հայ գաղթականութիւն) 1 ֆր.

Բանասէրի հրատարակած գիրքերը մեզ մօտ կը ծախուին Մարսէյլի մէջ միևնոյն գիներով ինչ որ Բարիզի մէջ «Բանասէր»ի խմբագրատունը։

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՑՐԵՆԱՍԻՐ (ՋԱՔԱՐԻԱ ՍԹՈՐԳԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՓԱՓԱԶԵԱՆ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
1894

Պուլկարիոյ անկախութեան հռոմներէ մէկին, Զաքարիա Սթորգանովի, որ իր ընդունակութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վաճառական, քաղաքական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ գահին ժողովի նախագահ դառնալու խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւնն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ թիւրքի լուծէն ազատելու համար խաղաղ պուլկար հայրենասէր յեղափոխականներիգործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեանն առթով։

Հեղինակը շատ իրաւամբ կը պնդի իր յառաջաբանի վերջ թէ «Ջանք պիտի պատճառէ ինձ եթէ թերցողների հետաքրքրութիւնը չչարժի պետական մարդ դարձած գիւղացիի այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներին 25 % զեղչ կը լինի։

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՏՈՒ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԴՐՑԵՑ ԶՕԼԶԱՔԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուածը ներկայացունէ ընտանեկան տիպեր պատկերներէ մին ուր կը տեսնուի անթարոյական մի հայր իւր տպակուած վարքուբարքով որչա՛փ չարչներուն պատճառ դարձած է և վերջը վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքէ սպանուած և անհետացած է առհասարակ։ Գինն է ֆրանգ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՓԱՓԱԶԵԱՆ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷԼ
Հայերէն տպարան Գ. Փափազեանի
Le Gérant : François CARRIÈRE
Marseille . — Imprimerie du Midi